

Քրիստոնեական աշխարհ

Բացառիկ

ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԸ

Եվրոլուս է Գարեգին Ա Ամենայն Տայոց Տայրապետի ծննդյան 80-ամյակին

ՔԵՍԱՎԲԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԲ ԷԶՄԻԱԾԻՆ



գին Կաթողիկոսին: Եւ իսկոյն կը շնորհաւորէ զայն իբրեւ ընտրեալ կաթողիկոս: ...Շնորհիւ Գարեգին արք. Ներսիսեանին ցոյց տուած ասպետական եւ ազնուական վերաբերումին՝ Գարեգին Կաթողիկոսը կը շահէ ընտրութիւնը...» (Թորգոմ՝ Վեհապետեան, Լուսարձակ, 1995, Բէրլին, էջ 355):

Եվ այսպէս՝ 18 տարի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Երկրորդը Լուսավորչի գահին նստեց որպէս Գարեգին Ա Ամենայն Տայոց

մալաբարանում: 1963-ին ստացել էր ծայրագոյն վարդապետական աստիճան, 1964-ին ձեռնադրվել էպիսկոպոս, 1971-73 թթ. եղել էր Իրանահայոց եւ հնդկահայոց միացյալ թեմի առաջնորդ, 1973-ին նրան շնորհվել էր արքայութեան պատիվ, 1974 թ. ընտրվել էր Գրեյստային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ, 1977 թ.՝ Մեծի Տանն Կիլիկիոյ հորին Արարչական Կաթողիկոսի աթոռակից, իսկ 1983-ին՝ Կաթողիկոս: Իր գահակալութեան տարիներին Աթոռակալ կաթողիկոսարանը հասցրել էր ծաղկուն վիճակի՝ զարկ տալով ուսումնակրթական, քարոզչական, հրատարակչական, ինչպէս եւ շինարարական աշխատանքներին: Եղել էր ակտիվ մասնակիցը միջեկեղեցական կազմակերպությունների միջազգային տարբեր համաժողովների՝ բարձր պահելով Տայ Առաքելական Եկեղեցու հարկն ու վարը: Իր իմացությունների եւ անձնական հատկանիշների շնորհիվ այդ կազմակերպություններում նրան մշտապէս վստահվել էր վարել պատասխանատու պաշտոններ: Չնայած առօրյա ծանրաբեռնված աշխատանքներին՝ հասցրել էր գրել ատված ծաբանական, կրոնական, պատմամշակութային եւ հոգեւոր բովանդակությամբ շուրջ 15 գիրք, բազմաթիվ աշխատություններ, հոդվածներ, քարոզներ:

դարընցն ու կաճառը: Տայոց Եկեղեցու քահանայապետների հեռատես ու խորաթափանց մտքի, իմաստության, ազգի, Քրիստոսի Եկեղեցուն ու երկրին անմնացորդ ծառայելու շնորհիվ էր, որ համաշխարհային քաղաքակրթության մեջ՝ անզամ պետականությունը կորցրած ժողովուրդը կարողացավ իր հանձնարքի փողը հնչեցնել, կարողացավ պահել ու պահպանել ապրելու եւ արարելու իր կերպն ու իրավունքը, կարողացավ վերստին կերտել իր անկախ պետությունն ու պետականությունը: Նման հայրապետներից մեկն էր Գարեգին Առաջինն էր, ով, ցավոք, ընդամենը չորս տարի գահակալեց: Սակայն ընտրությունից ի վեր նա իր ողջ եռանդն ու ջանքերն ուղղեց եկեղեցական կյանքի ներքին կարգավորմանն ու կազմակերպմանը: Նրա առաջին ու կարեւոր գործերից մեկը եղավ Գեորգյան հոգեւոր ճեմարանի վերաբացումը՝ իր պատմական շենքում (խորհրդային տարիներին այստեղ գործածու էր Տայաստանի պետական պատկերասրահի՝ Էջմիածին քաղաքի մասնաճյուղը), որին հետեւեցին ուսանողների հա-



կան հրատարակչությանը զարկ տալը, սոցեւոյթի կառույցների ստեղծումը, եկեղեցիների նորոգչական աշխատանքները: Վերատեսության ենթարկեց Տայաստանի թեմական կառուցվածքը. նախկին չորս թեմերի կողքին ստեղծվեց եւս չորս նոր թեմ, ինչպէս նաեւ Ուկրաինայի եւ Տայաստանի թեմական կառուցվածքը: Օշականում՝ սբ Մեսրոպ Մաշտոցի շիրմի կողքին կառուցեցին հոգեւորական շենքում, կյանքի կոչեց երջանկահիշատակ Կազգեն Վեհափառի

1995 թիվ, ապրիլի 4: Էջմիածնի Մայր տաճարում 400 հոգուց բաղկացած Ազգային պատգամավորական ժողովը երեք հիմնական թեկնածուներից (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ, Գարեգին արք. Ներսիսեան, Պարգեւ եպս Մարտիրոսյան) պետք է ընտրեր Ամենայն Տայոց 131-րդ Կաթողիկոսին: Կրկնակի քվեարկությունն ավարտվեց եւ սակայն... Որոշվեց ապրիլի 5-ի առավոտյան սկսել հաջորդ՝ 3-րդ քվեարկությունը:

131-րդ Տայրապետ: Գարեգին Ա Սարգսյան Ամենայն Տայոց Տայրապետը (ավագանի անունով՝ Նշան) ծնվել էր 1932 թ. օգոստոսի 27-ին Միրիայի Զեսաբ գյուղաքաղաքում: 1949 թ. ավարտել էր Մեծի Տանն Կիլիկիոյ դպրեմանը եւ նույն տարում ձեռնադրվել սարկավագ, իսկ 1952 թ.՝ կուսակրոն քահանա՝ անվանակոչվելով Գարեգին՝ ի հիշատակ Գարեգին Ա Գրեյստային Կաթողիկոսի: 1955-ին ստացել էր վարդապետական




«Ծիշտ այս պահուն Գարեգին Արքայան Ներսիսեան կը մօտենայ խօսակցիկն ու կը յայտարարէ, թէ իր թեկնածութիւնը յետս կը կոչէ՝ ի նպաստ Գարե-

աստիճանն ու դասավանդել դպրեմանը, իսկ մեկ տարի անց ստանձնել դպրեմանքի տեսչի պաշտոնը: 1957-59 թթ. ուսումը շարունակել էր Օքսֆորդի հա-



մար նոր կացարանային համալիրի կառուցումը, Քրիստոնեական դաստիարակչության եւ քարոզչական կենտրոնի ստեղծումը, հոգեւոր ու հայագիտա-

ծրագրերից մեկը՝ Տայոց մեծ սրբի եւ առաջին ուսուցչապետի անունը կրող դպրատունը:



«Կյանքն Աստված տվել է մեզ, որպեսզի մենք ստեղծագործենք, արժեքները Աստծու տված տուրքը, շնորհքը, բարիքը... Նա, որ իր երկրպարտը կյանքը անսահման արժեքների գիտակցությամբ է ապրում, այնպիսի գործեր կանի, որոնք մահ չեն ճակատը: Այսպես է Ամր Զայրապետների, Արքեպի, Սարսոխրոսների, Զեռոսների կյանքը: Գևազին, բայց Գևազին»:

ուղղված է մեր ժողովրդին, նրա հիշողությանը: Իսկ հիշողությունը՝ լինի պատմական թե՛ անձնական, արարման բանալի է, ծառանգականության կամուրջ, արյան կանչ:

Այժմ փորձենք թռուցիկ կերպով հիշել Զայրո Զայրապետի գրքերից մի քանիսը միայն՝ ելնելով դրանց բովանդակության այժմեականությունից ու հրատապությունից:

Գարեգին Ա Ամենայն Զայրո Զայրապետի առաջին գիրքը, որին կամենում ենք անդրադառնալ, «Արեան վկայություն» (1956, Բեյրութ) գիրքն է, որը գրել է դեռևս իր վարդապետության շրջանում, եւ նվիրված է Լիվիանոսի օրոք Զոմեանկան Կայսրության բանակում ծառայած 40 երիտասարդ քրիստոնյա զինվորներին, նրանց կյանքի վերջին օրերի չարաբանքներին, խոհերին, սպրուկներին, նրանց աներկապ հավատին ու նահատակությանը: Չիվորագրվել երկրին կամ հավատքին նշանակում է ի մահ կանգնել պաշտպանել հայրենին, պաշտպանել հավատքը, սրբությունները, նշանակում է մահվան մեջ կյանք սերմանել ու դառնալ հավատքի, գաղութարի, հայրենիքի սերմացանք: Զայրապետը վստահեցնում է, որ մարդիկ սուրբ չեն ծնվում, բայց սրբանալու, ասել է թե՛՝ Սրբությանը սրբությանը ծառայելու, անմաքուր նվիրվելու շնորհն ամենքին է տրված, թեպետ քչերը են անկախել կարելի վերածել: «Բայց վիատելու

կան Արարատի ստորոտում գտնվող մութ ու խոնավ խորխորատից՝ Խորվիրապից: Եվ չծագեց ինքնաբերաբար, ինչպես լույսն առավոտի: Մարդկության պատմությունը մեկ անգամ չէ, որ գրանցել-վկայել է «լույս գվարթի» ծագման ժամանակներն ու առիթները, ավելի ստույգ՝ պատճառները: Մեր ժողովրդի կյանքում մշտապես ամենաբարդ, ամենածանր, օրհասական ու անելանելի պահերին է ծնվել շրջադարձային ու բախտորոշ այս «լույսը» եւ ծագել մինչեւ իսկ խոր վիրապից: Եվ ահա խորվիրապյան այս լույսը դարձավ մեր հոգու ու մտքի տրամաբանությունը, դարձավ դարերի մեջ, քարերի մեջ, մագաղաթի ու թղթի վրա ամբարված մեր մտքի ու կամքի հանճարը, դարձավ մեր տան բազմադարյան ու սրբազան սյունը, մեր երազների ու տենչերի հայելին, որի մեջ կարողացանք տեսնել հազարաշունչ ու աստվածատուր մեր ինքնության դեմքը, հայ մարդ կոչվելու վավերական մեր անձնագիրը:

«Ինչ ընեն պատմության այսպես կոչուած «առարկայական» տուեալները, մարդկային տրամաբանութան չափաբաշխները: Ես աւելին եմ, քան իմ տրամաբանութիւնը, այսպէս մարդ չեմ՝ բարին հարազատ եւ ամբողջական իմաստովը:



Փակվեց լոկ Գրիգոր Լուսավորչի անձի մեջ, չսահմանափակվեց նրա ապրած ժամանակաշրջանով, այլ՝ «իր հոգիին մեջ խտացնելով, սերտացնելով, ուժեղացնելով, բազմապատկելով... Գայն դուրս բերաւ իր հոգին որպէս Լույսը Զայրապետին...», որպէս Լույսը Միաձնանչ Մայր տանգրին: Այն դարձավ Նոյ Նահապետից մինչեւ մեր օրե-

«ՀԱՅ ԳԻՐԳԻ ԸՐԱԳԱՎԱՆՅՑ Է ԱՅՍՕՐ...»

հարց են տալիս: Ո՛չ, մենք կա՛նք, նրանց ո՛վ կանք, նրանց ապրած գաղութարձերի, հավատքի, զգացումների հաղորդակցությամբ է, որ մենք ապրում ենք այսօրվա մեր կյանքը»:

(Զայրենիքը պատկերն է հայության, Զարոգների ժողովածու, գիրք Ա, Էջմիածին, 2000 թ.)

Յիրավի, այսպես մտածելով են ապրել, արարել, իրենց լուսավոր հետքը թողել երկրի, ազգի կենսակերպի ու կենսափիլիսոփայության վրա մեր սրբերը, հերոսները, մեր մեծանուն հայրապետները՝ ամեն մեկն Աստծուց ստացած իր տուրքի, շնորհի, իր օժտվածության ու նահապետության շրջանակներում:

Ամենայն Զայրո Գարեգին Ա Կաթողիկոսի սեպհական շնորհը, որ ստացել էր Աստծուց, փառասեր գրիչն էր, որով նա կարողացավ իր հոտին, հայ մարդուն փոխանցել աստվածաբանական իր գիտելիքներն ու ընկալումները, եկեղեցական, ազգային ու հասարակական կյանքին վերաբերող իր խոհերն ու մտորումները, իր ու նախնայաց ժամանակի օհիմքը, ջիղը, երակը եւ դրանց ազդեցությունը, դասերը մեր անձնական, հանրային ու եկեղեցական կյանքում:



պատճառ չկայ, - հավաստիացնում է Զայրո Զայրապետը. - դժուար է ըլլալ, հերոսական ծիգ հարկ է ըլլալու համար: Բայց անկարելի չէ ըլլալ, որովհետեւ մարդու համար անկարելին որպէս կոչում տրուած չի կրնար Աստուծմ: Որովհետեւ Աստուած Ինքզինք չի կրնար հակասել...»՝ ակնարկելով, որ ապրելու, արարելու, ծառայելու, նվիրվելու իրավունք է տրված մեզ, բայց «ինչպիսիք» ընտրության իրավունքը նույնպես: Իսկ մեր ընտրությունը, թե՛ այն նույնիսկ լավագույնն է ու առավելագույնը, չի թագարկվում մի անգամից, մի շնչով՝ մահանց դժվարությունների, արգելքների, զրկանքների, զոհողությունների, առանց նահատակների, գոհերի ու նաե՛՝ ճշմարիտ, հերոսական նվիրվելու: «Արեան վկայություն» գիրքն իր գաղափարական ողջ ուղղվածությամբ մի ինքնատիպ բաց նամակ է՝ հասցեագրված 1700-ամյա քրիստոնյա համարվող այսօրվա մեր երիտասարդությանը: Իսկ 1700-ամյակը մեզ՝ հայերին համար նոր հոգեգալուստի կամուրջ է, «Լոյս գուարթ»-ը:



Տրամաբանութիւնը գործիք մըն է, եւ ես՝ գործատուրը, որ սակայն այդ միակ գործիքով չի շինել իր կեանքի ձեռակերտը: Քաջ գիտեմ, որ ներկայ դարուն մարդիկ ո՛ր աստիճանի բացարձակութեան են տարած այս տրամաբանութիւն կոչուած գործիքը: Գիտութեան աստուածն է ան, անոր կուռքին ի՛նչ թանձր առաստութեամբ խունկ կը ծխեն... Դասակ ինչո՞ւ այդ նոյն տրամաբանութեան պաշտամունքին հետեւողները չեն չաջողիր նոյն կարգապարտելով մարդկային կեանքը, այլապէս մարդն է խաղաղութեան ճամբան յարդարել...»,- մեր հարցումներին այսպէս է պատասխանում Զայրո Զայրապետը՝ 1994 թ. Արեւիխատում հրատարակած իր «1700-ամեակը՝ նոր հոգեգալուստ» գրքում, ուր ամփոփված են նրա խոհերն ու ապրումները՝ ի պատասխան Զայրատանում քրիստոնեությունը որպէս պետական կրոն ընդունման: Խորվիրապի «խորհուրդ խորհից» դարերի հեռվից ու դարերի անցքերի իր մեջ առած՝ ի կարող անհագնատ տալ որդե՛ն հայ մարդու, անանվանող որ այդ հայը լուսավորչափուն եկեղեցու սպասավոր է: Չի կարող ամվերջն ու անդադար հարցադրումներ չաւել: Չէ՛ որ այդ խորհուրդը չսահմանա-

րո ձգվող հայոց լինելիության իմաստավորումը: Այն դարձավ «Ես աւելին եմ, քան իմ տրամաբանութիւնը» գիտակցության ճշմարտությունը: Եվ այդ ավելին լինելը կի որչ ժողովրդի՝ «խաչն ուսերին, խաչելութեան կամքը սրտերուն մեջ, բայց եւ հոյսի լույսը հոգիներուն մեջ եւ հաւատքի լուսատրչեան կանթեղն իրենց գիտակցութեան խորհին մեջ...» կրած 1700-ամյա կյանքն է: Զայրո հովակոսի Խորվիրապի երեսակալությունն ապրված հուշի պես տեղափոխվում է 301 թվական, տեղափոխվում հայոց աշխարհի Խորվիրապից ծագող Լույսի նոր գույն ու երանգ ստացած անդաստանը: «Արժանիք ունենալը մեկ բան է, արժանիք ունենալու գիտակցութիւնը ունենալը ուրիշ բան է: Որպէս ազգ այս արժանիքը չաւեցանք, արժեքը ունեցանք, բայց եթէ չենք գիտեր մեր այս արժանիքը ունենալուն արժեքը, ունենալը ի՛նչ կ'արժէ: Մենք պատիւը ունինք այսօր աշխարհի մեջ մեր հայրերու մեզի ծառանգ կատարած արժանիքը ունենալու. հպարտութեամբ կ'ըսենք երբեմն օտարներուն, թե՛՝ մենք աշխարհի առաջին ազգն ենք, որ պետականութեան ճանցար քրիստոնեութիւնը որպէս ազգային կրօն: Այո՛, ըսելը դիրին է,

բայց գայն արժեցնելը մեր կեանքով, մեր գործերով, մեր վկայութեամբ, մեր ստեղծագործականութեամբ, այդ է մեր բուն, սեփական արժանիքը: Ձեր հայրերուն ձեզի տուածովը հպարտացե՛ք, բայց մի՛ գոհանաք. անոր վրայ աւելցուցե՛ք ձեր պատիւը, ձեր կենդանի վկայութեամբը շահելից պատիւը: Այս պատիւ գիտակցությամբ է, որ այսօր մեր 1700-ամյա պատմությունը պետք է դիտել որպէս հոգեկան վերանորոգություն, հոգեւոր դարձի, նոր մկրտութային խորհրդանշան:

Յաջորդ գիրքը, որին կամենում ենք անդրադառնալ, «1700-ամեակը՝ նոր հոգեգալուստ» գիրքն է, որն ուսուցանում է մի պարզ ու անհրաժեշտ բան. այն, որ քրիստոնյա լինելը մարմնի վրա կրելից զգեստ չէ, այլ ապրելու եւ արարելու կերպ, այն ամեն օր մանկակցող սեր է, որ մշտապես մեր հոգածության ու իմանքի պետքն ունի: Զրիստոնեությունն ի վերուստ մեզ տրված սրբազան պատգամ է, որին պարտ ենք լինել հավատարմի են «վառ պատիւ կրակը ջահին, որպէսզի արծարծ մայր բոցը...», բոցը՝ «Ես աւելին եմ, քան իմ տրամաբանութիւնը» գիտակցությամբ:



Քրիստոսի մարդեղությունը ճշմարտության թանձրացումն է, իրականացումը կենսելի մեջ: Շատ խնամալից մարդիկ շատ գեղեցիկ բաներ ըստ էին ճշմարտության մասին: Բայց Քրիստոս՝ Աստուծոյ Որդին, միայն չխօսեցաւ ճշմարտութեան մասին, այլ եղաւ ճշմարտութիւնը: «Այս է ճշմարտութիւնը» ըստա՛ թուղթի վրայ արձանագրելով զայն կամ օրի այլընտրանքով յանձնելով իր խօսքը, այլ «Ե՛ս եմ ճշմարտութիւնը» ըստա՛ իր կենսի դրականներուն մէջ կենդանի պատկերը տալով ճշմարտութեան, իր անձին մէջէն: Քրիստոսեան իր կրօնը եպատ տեսական նկարագիր չունի, այլ գոյութեանական:

Բեթղեհէմէն հրէշտակներու մեկնոյն է հոգեբով մեղեդիին բառերը քաղցեցին դարերուն քայլերով դէպի Միջին Արեւելքի, Շարյազոյն Արեւելքի, Եւրոպայի, Ափրիկէի, Ամերիկայի չորս ծագերը եւ խառնուեցան հազարաւոր



լեզուներու մէջ, դարձան բազմահարիւր ազգերու ընտրելագոյն, հրաշակերպող բառերը, իջան բանաստեղծներու հոգիներուն մէջ, մարմին առին տաճարներու քարերուն մէջ, ձեւ ու գոյն հագան նկարիչներու պատառներուն վրայ, մեղեդի դարձան երաժշտներու յորիսումներուն մէջ, սահեցան մարդոց ընտանեկան երօղներէն վար, մէկ խօսքով՝ տարրացան մարդոց ողջ կենսելի մէջ, աշխարհի բոլոր անկիւնները եւ իրենց վեհացուցիչ թռիչքը տուին մարդկութեան քաղաքակրթական գնացքին: Չեղաւ երկիր ու չգտնուեցաւ ազգ, որ Բեթղեհէմ չունեցաւ...

Աշխարհը Բեթղեհէմացաւ...

Մեր արմենական ժողովուրդը եղաւ ու ճանչցուեցաւ որպէս առաջին ազգը համայն աշխարհի մէջ, Բեթղեհէմի մէջ մարմնացեալ Աստուածորդային հաւատքը, գաղափարական աշխարհը, բարոյական սկզբունքները, հոգեւոր ճշմարտութիւնները, բայց մանաւանդ սիրով գերիշխան թագաւորութիւնը, ամենիշխան տիրապետութիւնը որպէս կենսելի ուղեգիծ ճանցող եւ պետականորէն զայն ազգային կրօնք հոչակող ազգը: Գրեթէ անկասկածաբար ուրախութիւնը թափանցեց հայ ժողովուրդի երանելիքուն մէջ: Գայուն գոյութիւնն համակ՝ ներթափանցուեցաւ Մերէն ծնած, Սիրով ծնած Աստուածորդային փրկութեան ատեմիսով: Գայ ժողովուրդը այդ ատեմիսը վերածեց երգի, իր սեփական երգին ու իր տաճարներուն եւ ընտանեկան օճախներուն մէջ երգեց. «*Խորհուրդ մե՛ծ եւ սքանչելի...*»:



Քրիստոս ծնաւ, որպէսզի մարդ վերագտնէ իր աստուածաստեղծ եւ աստուածաման բնութիւնը եւ աստուածապարգէն իր առաքելութիւնը, որպէսզի մարդուն մէջ վերստին ծնցնէ զԱստուած եւ աստուածայինը դարձնէ մարդկայինին տիպարն ու ուղեցոյցը, որպէսզի խաղաղութիւնը տիրէ մարդկութեան մէջ մարդու հարազատ, բնական պարզ էութեան վերականգնումով եւ կենսելի մէջ դրական, գործնական շօշափելի արտաբանութեամբ, որպէսզի «լռեսցին պատերազմունքը», եւ թագաւոր սերը՝ աղբիւրը կենսելի գեղեցկութեան եւ մարդու երջանկութեան:

Եւ այսօր ալ ու մանաւանդ այսօր, ներկայ ժամանակներուն, երբ նիւթական պայմաններու առատութեան եւ կենսելի բարգաւաճ դրութեան ստեղծումին եւ անոնցմէ յառաջացող մակերեսայնական վաղակցուլ հաճոյքներու առատացումին հետեւանքով մարդը անելի դիրքին եւ արագ կերպով սայթաքումներու երթալու հնարաւորութեանց մէջ կը գտնուի, Քրիստոսի ծննդեան խորհուրդը առաւել եւս այժմեականութիւն եւ կենսականութիւն կը ստանայ: Որովհետեւ Աստուածորդային ծննդեան տօնը իրաւեր մըն է իջնելու մեր հոգի-մտաւորուն մէջ եւ բարի հովիւներուն մօտեցման ուղիով տեսնելու, թէ ինչպէս այստեղ կը ցոյայ Բեթղեհէմի հրաշագան դրուագը...

Բշնամիները բազմերու պէս հաւաքուեցան Գայաստանի վրայ ամէն անգամ, երբ տկար գտան զինք կամ Գողգոթայի ճամփորդ եւ խաչի մահապարտ, ամէն անգամ, երբ աշ-

քիած դաւանափոխական ճիգերին, որոնք սակայն նրա կառուցուածքի արտաքին պատերի վրայ փորուածքներ, ճեղքեր յառաջ բերին, առանց կարենալ խախտելու մի քար նրա կերպին կառոյցից, առանց կարենալ այլափոխելու մի հարազատ գիծ նրա էութեան կերպին կազմուածքի՝ շնորհիւ Գայաստանեայց Եկեղեցու նուիրական, պաշտելի եւ անխախտելի աննդապահութեան ոգուն, որ այդ երբին մարմնացել էր *Արեւելեան* համայն անուկի տակ ճանաչուած մի խումբ վարդապետների ինչպիսեղի եւ նրանց հետեւող գործերի ու շնանքերի մէջ:

Արթնացի՛ր, Գայ ժողովուրդ, Քրիստոսի Բեթղեհէմեան լոյսին մէջ լուա՛ւ աչքերդ եւ անպայման կը հասնիս զագաթն արփաւետ կենսելի երջանկութեան եւ ազգի յարթանակին: Ապրէ՛ պարզութեան ոճով, քալէ՛ արտանանական զոհողութեան շախիղով, վեր՛ մնացի՛ր հոգալուութեան այլեւս յանկուցիչ փորձութիւններէն, հեռո՛ւ

ԸՆՏՐՈՒՄԻ ՎԵՆԱԾԱՆ

խարհի փոթորիկներու մահասարսուտ սլաքները Գայաստանի վրայ ուղղուեցան կամ Գայաստանէն անցան: Ելան հաւաքուեցան եւ ուզեցին Գողգոթան գերեզմանի վերածել եւ հայոց լեռներու ժայռերը գերեզմանաքար դնել հայոց պատմութեան վրայ: Բայց լոյն այդ թշնամիները «*ցրուեցան*», հեռացան, երբ տեսան յարութեան յոյսն ու կամքը, հաւատքն ու սերը հայ ժողովուրդին:

Մեր վերջին Գողգոթայեան՝ Գամաշխարհային Առաջին Պատերազմի ընթացքին Գայ ժողովուրդի դէմ փորձուած ցեղասպանութեան եւս այլ բազմահարիւր հազարներու տեղահանութեան եւ աշխարհացոյցի տարողումէն ետ, երբ ամէն ոք կը խորհէր, որ գերեզմանի քարը անշարժելի կերպով գետնուած էր հայոց պատմութեան վրայ, ահա դարձեալ նոր կենսք առաւ Գայկեն ցեղը եւ յարութեան շունչով ներթափանցուած՝ սկսաւ ապրիլ նոր ու հետզհետէ անելի պայծառութիւն հագնող իրագործումներու շրջանը:

Հայաստանեայց Եկեղեցին, իր հարազատ, սեփական հօտին ծառայելով հանդերձ, ծառայել է եւ այժմ էլ ծառայում է տիեզերական եկեղեցուն, համամարդկային ընկերութեան ուրիշ բաղկացուցիչ անդամներին, մասերին, զանգուածներին՝ մասնակցելով նրանց կենսելի եւ մատուցանելով իր կարելի օժանդակութիւնը, քրիստոնեական համաշխարհային գործընկերութեան արդիւնատու մի խնդիր:

Հայաստանեայց Եկեղեցու կապը տիեզերական քրիստոնեութեան հետ սոսկ ծագումի, պարզապէս նրակից շառափղած լինելու հանգամանքի մէջ չի կայանում, այլ այն սերտ մասնակցութեան մէջ ընդհանրական եկեղեցու կենսելի ու գործին, որը նա իրագործել է իր ողջ պատմութեան ընթացքում, դարերի երկայնքին, երբեմն գորակոր եւ երբեմն թոյլ ձեւով, մերթառաւել եւ մերթառաւել տարողութեամբ:

Հայաստանեայց Եկեղեցին՝ սիրտը հայ ժողովուրդին, միջին դարերին եւ հետագայում դարձաւ թիրախ Լատին Եկեղեցու այլամերձ ոգուն

կեցի՛ր աշխարհայնապաշտութեան գետնաքարը եւ հաճոյաբա՛ր հրապարկներէն, ընթացի՛ր ծուծով, սուտեազեւ, արթուն, հակակշռել եւ ընտրել գիտցող կամքով եւ ճաշակով եւ կը հասնի՛ս խաղաղութեան: Գողգոթա մէջ տո՛ւն տուր պարզութեան վարդապետին՝ Յիսուսին:

Ապրիլեան եղեռնին եղեռնը պատմութեան թողնելով եւ *ապրիլը* աչքի լոյսի վերածելով՝ արմենական մեր ժողովուրդը թմբիլէն արթնացած, վերքէն սրբուած, սպին նոր ջիղի ու մկանի վերածած, ապա կ'ապրի վերածննդեան այն շրջանը, որ իր աչքերուն մէջ կը լեցնէ իր ապագայի երագներուն տեսիլքը, կամքերուն մէջ կը լարէ զճանկան յաղթանակաբան տեսիլը եւ ողջ էութեանը կը շարժի իր ինքնական լինելութեան արդար իրաւունքը իր պատմական հայրենիքի ամբողջութեան մէջ:

Եթըռ տասնամեակներու ընթացքին մնչուած, խցանի տակ խեղդուած իր ձեւն է Դարաբաղը, լարուած ձգտում մը, արդար պահանջք մը եւ բնական նկրտում մը, որ ահա յանկարծ կը փոթորկէր ողջ հայութիւնը, Երեւանէն մինչեւ սփիւռքի չորս տարածքները: Ո՛ր հայու ականջին մէջ կրնայ մահ գտնել միահամուռ եւ ուժգնաշէշտ գոչումը, հայութեան էութեան պողոթնումը *Դարաբա՛ղ, Դարաբա՛ղ, Դարաբա՛ղ* գոչումներով հազարներու անգամներ Երեւանի փողոցներուն եւ իրապարակներուն վրայ արտասասուած եւ աշխարհի չորս ծագերուն արձագանգող:

Մենք ցրուած ենք աշխարհի չորս ծագերուն վրայ: Մեր հողը մեր իրաւունքն է, մեր գոյութեան կրունակն ու գրասկանը: Մեր յուշարձանները՝ մեր տաղանդին արգասիքը: Մենք թէեւ ամէն տեղ ենք այսօր, բայց միշտ հոն ենք՝ արեւմտեան մեր Գայաստանը, որովհետեւ մեր ողջ պատմութիւնը կը եւ հոն են իսպառները մեր հայրերուն, հոն են հետքերը ստեղծագործ հանճարին: ... Դեռ կը քանդեն, քանդուածը երկրորդ անգամ կը քանդեն: Բայց հոն ենք մենք, ո՛րք ալ ըլլանք, մեզ ալ չեն կրնար քանդել...

▼▼▼

Մենք ներկայիս մեջ ապրող եւ դեպի ապագայ հայրոջ ժողովուրդը ենք: Յուշով եւ իշխատակով միայն չենք ապրիր: Յամառ, անտեղիտակի պայքարով մեր գոյութիւնը տեսականացնող եւ արժեւորող ազգ ենք այսօր ու ամրակուտ կամքով պրկուած՝ ի խնդիր վաղուան, ապագայի մեր լուսաւոր, պայծառ հեռանկարներուն: Մեր հայտնաբերող յաճախ անցեալին կ'ուզողուին, բայց հոն չեն սեւեռուիր, հոն չեն գամուիր, հոն չեն սառիր: Անկէ կրակ ու լոյս, տեսիլք ու թռիչք կ'անեն՝ դառնալու համար մեր ներկայիս եւ սեւեռուելու համար մեր ապագայիս վրայ:

▼▼▼

Ո՛ր բանաստեղծին քննելու խօսքերը, ո՛ր ճառագիտին կրակէ խօսքերը, ո՛ր բանաստիսի հանդարտ վերլուծումները, ո՛ր գիտնական յօդուածագրին տրամաբանական կառուցումները, ո՛ր լուսարձակին գունագեղ ցուցադրութիւնները կրնան իր իրական, իսկական, կենդանի պատկեր-

կային ինքնածին ճիգ կայ անոր մէջ, խորանալու, մտերմանալու աւելի մեծ կարելիութիւն: Յուցափեղկին կրնանք նայիլ, բայց ցուցափեղկով չենք կրնար գծահանալ: Պետք է մտնել ներս եւ անձամբ տեսնել, շօշափել եւ զգալ ու ըմբռնել:

▼▼▼

Պատկերաւոր բացատրութեամբ մը Սուրբ Մեսրոպ դաշտ մը շնորհեց միայն, այլ նաեւ խոփ շինեց ու տուաւ տիրոջ, եւ դաշտի մշակման գաղտնիքը իր մշակութեան փորձով յանձնեց բոլոր մշակներուն զալիքի: Ո՞ր միայն մէկ գիրք թարգմանեց, այլ հազարաւոր գիրքերու թարգմանութեան եւ գրութեան բանալին շինեց եւ տուաւ բոլոր անոնց, որոնք հոգիի մէջ յաւիտենական արժեքներու սերն ու կրակը կար:

▼▼▼

Սուրբ Մեսրոպ իրատես ու խորագետ միջոց էր, հեռատես հայեացք ու լատն լաւագոյնին ձգտող կամբ: Եւ ի՞նչ կայ աւելի յատկանշական ու բա-

մէջ չի վերածուիր հոգեմաշակման եւ հոգեբանութեան: Իրական է, երբ դուրսէն կու գայ, առանց մեր կամքին, ընդառաջումին, Նոյնիսկ երբեմն մեղսակցութեան: Նիւթէն ու կիւրծեղէնէն անդին չի կրնար անցնիլ: Այո՛, կրնայ անցնիլ միայն այն ատեն, երբ մեր հոգիները գտնէ կիւրծեղէնացած, կիւրծեղէնով տիրապետուած, մեղքով նուաճուած:

▼▼▼

Մարդեր կան, որոնք կեանքին հետ կապ ունին այնպէս, ինչպէս անտարբեր հանդիսատեսը, որ կը դիտէ պարզապէս, առանց մասնակցելու: Անոնք կը քալեն կեանքի եզերքներէն այնպէս, ինչպէս «Երանելի» ճամբորդներ, որոնք կը քալեն դաշտերու եզերքն ի վեր կամ կը դեգերին ծովու փակուցներուն՝ պարզապէս դիտելու համար դաշտերու մէջ քրտնող մշակները եւ ծովերու ալիքներու դեմ կռուող նաւաստիները կամ ուռկան քաշող ձկնորսները: Անոնք ոչ միայն ոչինչ կը բերեն որպէս նպաստ, որպէս մատուցում մարդ-



ՆԱՅԻՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԵՐԻՑ

րին մէջ այնքան հարազատօրէն վերարտարել ձեռագրի մը գեղարուեստական արժեքը, որքան մարդուն սեպիական աչքերուն ջինջ նայուածքը: Երբ այդ նայուածքը հանդիպի գունագեղ «խորան»ներուն, նկարչագեղ Աւետարանիչներուն, արուեստի պայծառակերպող գորութեամբ «ապրող» թռչնագիրներուն եւ կենդանագիրներուն, նրբախիւս լուսանցազարդներուն, հայ վարդապետին ձեռքերով կարգապարուած տողաշարերուն եւ գաղափարուած տառերուն, 17-րդ դարու եւրոպական արուեստը հայկականին ու պարսկականին միախառնած որմնանկարներուն, զարդախիւս դրասանկներուն, ծաղկուած կամարներուն, այն ատեն բան մը կը խլիտի դիտող հայրու հոգիին մէջ, իր հայրութեան զգացումը աւելի վառ գոյն կը զգենու եւ պիտի լարուածք կը ստանայ, իր գոյութեան արմատները աւելի խոր գոյգոյլ՝ ինք ապագայ ըլլալիքը աւելի յուսալից եւ աւելի պայծառ պատկեր կը հագնի իր գիտակցութեանը մէջ:

րացուցիչ, քան այս ստորագելիները ծառայութեան մարդուն համար, որ ո-գիին հետ ունի միտքը, ձգտումին՝ ողջամտութիւնը, թռիչքին հետ՝ չափի ու ձեւի գիտակցութիւնը - մարդը իր ամբողջական եւութեան մէջ:

▼▼▼

Օր պիտի ըլլայ մեր կեանքին մէջ, երբ պիտի սպասենք, օր, երբ պիտի վախնանք, օր, երբ պիտի տառապիւք, օր, երբ պիտի գուրբանանք: Բայց ամէն օրուան մէջ պահ մը պիտի ըլլայ մեր կեանքին մէջ, երբ պիտի սիրենք, եւ այդ սիրովք պիտի նուաճենք սպասումի անձկութիւնը, վախի տագնաւը, տառապանքի փուշը եւ գուարճութեան պղպշակային խաբուսիկութիւնը, որպէսզի անոր մէջէն օրերը «լոյսի անձրեւ» դառնան մեր անհատական կեանքի մէջ, եւ մենք լոյս անձրեւներ մեր ազգի կեանքին մէջ:

▼▼▼

Աստուած անբառ ծնաւ իր մարմնեղէն գոյառումին մէջ, որպէսզի հարստացնէ մարդը հոգեկան հարստութեամբ: Մենք մեր նիւթեղէն հարստութեամբը չաղբատացնենք զԱստուած մեր կեանքին մէջ այնպիսի պարելակերպով, որ դառնայ այլամերժ ու վատահարող սիրոյն ու բարիքին եւ ըլլայ դիւրընկալ հաճոյքին, շահին ու շքային, սնամէջ արժեքներու, որոնք կրնան շատ դիւրաւ մեզ առաջնորդել դէպի հոգեկան եւ զգային սնանկութիւն:

▼▼▼

Այսօր կուռքերու պատուանդաններու վրայ են դրուած ճարտարաշինական, տարապայմանօրէն մեքենականացած եւ զվխու պտոյտ տուող արագութեամբ մեքենականացող կենսակերպերն ու գործեակերպերը, եւ անոնցմէ թախանուած եւ սնուցող կիւթապաշտութիւնը, հաճոյապաշտութիւնը, «Երբ, արք եւ ուրախ լեր» նշանաբանով մակագրուած «աստուածակաշտութիւնները»՝ բարոյական անկուծի անդուտի եզրին հասած սահմաններով...

▼▼▼

Մահը իրական է. չենք կրնար խուսափիլ անկէ. մահը անհրաւեր եւ անսպասելի իհր մըն է. ո՛ր ծամանակը յայտնի է եւ ո՛ր ալ գալու կերպը: Մահը, սակայն, տիրական չէ, երբ մեր

կային ընկերութեան ընդհանուր վատասկին եւ ստեղծագործութեան թափին, այլ նաեւ բողոքի, զգոհութեան, աժան եւ դատարկ քննադատութեան սին փորձերով երբեմն կը դանդաղեցնեն ընթացքը գրական ստեղծագործութեան՝ բեկանելով յաճախ ստեղծագործ, լարուած տրամադրութիւնները մարդերու մէջ եւ նսեմացնելով իրագործուած արժեքները ժողովրդական արդար գնահատանքի նժարին մէջ:

▼▼▼

Մարդկային կեանքը առանձնացած ու ամալացած ղղեակներու աշխարհի մը մէջ չէ ունեցած իր դարաւոր ընթացքը, այլ հաղորդակցութեան ճամբաներուն վրայ, երբեմն զուգահեռ, երբեմն խաչաձեւ, պայքարի զարտերու վրայ, մէկ խօսքով՝ շարժուն աշխարհի մը մէջ, ուր մարդիկ իրարու հանդէպ ունեցած են սիրոյ ու ատելութեան նեղիակ զգացումներուն հետ միասին փոխադարձ պատասխանատուութեան կապեր, պարտականութեան յարաբերութիւններ, առանց որոնց մարդկային կեանքը ինք անհրապոյր, մեռելային վիճակի մը պատկերը պիտի պարզեր լաւագոյն պարագային:

▼▼▼

Կան մարդիկ, որոնք հաճոյքով կը լեցնեն պարապութիւնը: Ուրիշներ՝ ծանակցով կը մեղսեն տառապանքը դատարկութեան: Բայց երկու պարագաներուն ալ ուրիշ բան չենք ունենար, բայց թէ խաբկանքը լեցունութեան եւ ոչ թէ լեցունութիւնը՝ ինք: Լեցունութիւնը սեփական մտածումով, աշխատանքի, յանձնառութեան ու նուիրեալ ծառայութեան մէջ կը կայանայ:

▼▼▼

Փռնի դարձող միս ու ոսկորն է, իսկ մարդը միս ու ոսկոր ունեցող, բայց միս ու ոսկոր չեղող այն Եակն է, որ ունի հոգեկան ապրումներ, գաղափարներ, ունի իտեալներ եւ մանաւանդ կեանքի մէջ ստեղծագործութեան եւ յառաջդիմութեան անյազ տնէլ եւ անսանձ թռիչք: Եւ մեռելներն են, որ մեզ կը իշեցնեն, թէ իրենք կ'անցնին, իրենք անցնելիք միս ու ոսկորով, բայց կ'ապրին, որովհետեւ իրենց հաւատքը, գաղափարը, ստեղծագործութիւնը վեր կը մնան հողայնութեան օրէնքներէն:



«ՎԵՒՅԵՔ ԵՆՉ ԴԱ ՏԱԼ, ՎԵՎՈՒՄ»



15 տարի առաջ, ընդունվելով աշխատանքի Մայր Աթոռ Սբ Էջմիածնի մամուլ դիվիզիոնում, պատիվ է բախտ ունեցա ծանոթ լինելու Գարեգին Ա Վեհափառին: Հաճախ եմ ունկնդիր եղել Հայրապետի խոսքին՝ գանազան պաշտոնական ընդունելությունների եւ հանդիպումների ժամանակ եւ միշտ հիացել մտավորականի նրա կերպարով ու պերճախոսությամբ:

Յուրաքանչյուրի համար Վեհափառի հետ ծանոթությունը մի իսկական հայտնություն էր: Նա գրուցակիցներին գերում էր իր առիթնող խոսքով ու մեծ ինտելեկտով, լեզուների հրաշալի իմացությամբ: Ամերիկա հովվապետական այցելություններից մեկի ժամանակ ամերիկյան մամուլը գրել էր. «Հայոց Հայրապետը խոսում է Բայրոնի անգլերենով»: Վեհափառը հրաշալի խոսում էր նաեւ ֆրանսերեն, երբեմն օտար իյուրերի հետ հաճուցով մի քանի բառ էր փոխանակում նաեւ նրանց մայրենի լեզվով:

1998 թվականի նախագահական ընտրությունների առիթով Հայաստան ժամանած անգլիացի մի լրագրող ցանկություն էր հայտնել հանդիպել նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Վեհափառը, որ երբեմն չէր հրատարակում հարցազրույցից, ընդունեց օտարերկրյա լրագրողին:

Շուրջ մեկ ժամ տեւած զրույցից հնայված լրագրողն իր ուղեկցին խոստովանեց. «Սա Հայաստանում իմ ամենահետաքրքիր հանդիպումն էր»:

Թվում էր՝ Վեհափառի խոսքն անսպառ կարող է հորդել: Նույն՝ 1998 թվականի աշնանը, երբ Ամերիկայում երկարատեւ բուժումից հետո կարճ ժամանակով Հայրապետը կրկին Մայր Աթոռում էր, հանրային ռադիոյի թղթակիցը, օգտվելով առիթից, ցանկացավ Վեհափառի հերթական պատգամը ձայնագրել, որ սովորաբար ամեն ամիս

ըր ձեռքով անընդհատ նշան աւում՝ հասկացնելով, թե էթերային սահմանված ժամն արդեն սպառվել է:

Ինքը՝ Վեհափառը, չափազանց կարեւորում ու գնահատում էր մամուլի դերը: Ուշացած հաղորդագրության մասին ասում էր. «Փչացած ապուրի կնամանի»: Իսկ անհիմն ու քանարկու հողվածները գնահատում էր մեկ բառով՝ ճղճիմ:

Անսպառ էր ոչ միայն խոսքը, բեղուն էր նաեւ գրիչը: Ամեն առավուտ, երբ դիվանատան աշխատակցուհուն հանձնում էին Վեհափառի ձեռագրերի հերթական տրցակը՝ համակարգչում մուտքագրելու համար, գրքմացած ու երբեմն էլ նեղսրտած՝ նա չէր պատկերացնում, թե երբ է Վեհափառը հասցրել այդքանը գրել:

Գարեգին Ա Կաթողիկոսն ազատ ու անկաշկան էր ցանկացած լարանի առջեւ՝ օժտված իրեն լսեցնելու մեծագույն ձիրքով: Դա նկատելի էր հատկապես մա-

վելի առույգ էր հնչում: Հաճախ մի քանի անգամ կրկնում էր նույն «խորամանկությունը», որից հետո բարձր ու ոգեւորված հնչում էր միասնական աղոթքը:

Թերեւս, Վեհափառին օտար չէին նաեւ մարդկային պարզ ու ռախոյունները: Հիշում եմ, թե Հայաստանում Նորաշնչակի դեսպաններից մեկին հետ հանդիպումից հետո ինչպիսի ուրախությամբ մատնացուց արեց աշխատանքայնում դրված դեսպանի ընծան, որ արվեստով պատրաստված նախազգարող նարդու սեղան էր: Ակամա հարցրի, թե նարդի խաղո՞ւմ է: Պատասխանը հնչեց այդ խաղին վայել ինքնագովորված: «Հաճեցե՛ք ինձի դաս տալ»,- պարզվեց այս կերպ էլ Վեհափառին հրավիրում խաղի:

Ամուռնալի ու զգայացունց է հատկապես Վեհափառի պաշտոնական վերջին հանդիպումը: 1999-ի մայիսին Հայաստան էր այցելել Հունաստանի նախագահ Կոնստանտինոս Ստեֆանուլուրը: Նախագահի հանդիպումը պետք է տեղի ունենար Վեհափառի Գահասրահում: Բոլոր իյուրերն այնտեղ էին, երբ հոգեւորականների օգնությամբ Գահասրահ մտավ նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետի անձանւելիորեն հյուրված արտաքինը շատերին անանկալի բերում էր: Կաթողիկոսը վերջին վիրահատությունից հետո այնտեղ չէր խոսում եւ շրջապատի հետ հաղորդակցվում էր միայն գրավոր: Վեհափառի ողջույնի խոսքն ընթերցեց Հունաստանի թեմի առաջնորդը: Ողջույնների փոխանակումից հետո զրույց, որպես

այդպիսին, տեղի չունեցավ: Վեհափառի հիվանդությունը ցնցել էր ներկաներին: Ակնհայտորեն հուզված էր նաեւ Հունաստանի նախագահը: Սակայն առավել հուզիչ էր Հայրապետի վերջին «Շնորհակալություն»-ը, որ Վեհափառը գրեց հունարեն: Ինձ թվաց, որ Հունաստանի նախագահի հիշերին արցունքներ երեւացին: Սա, թերեւս, Նորին Սրբուհայն Հնորհակալությունն էր ոչ միայն նախագահի այցելության, այլեւ նախորդ տարի Հունաստանի խորհրդարանի կողմից Հայոց ցեղապանության ճանաչման համար:

Մեկ ամիս անց, շուրջը համախմբելով Մայր Աթոռի միաբանությանը, Վեհափառը թղթին էր հանձնել նաեւ իր վերջին պատգամը. «Սիրելի՛ միաբաններ, հոգեկան խոր հուզումով կը բաժնակցվիմ ձեզ, կը միանամ Աստուծոյ՝ Հարուցեցա՛մ Տիրոջ: ...Ամտանելիօրէն՝ տկար եմ. դուք մնա՛ց գորաւոր»:

Օրեր անց հայոց 131-րդ Հայրապետի գահը ծածկվեց սեւ շղարշով:

Վեհափառի մահվանից հետո էր, որ հայերեն թարգմանությամբ լույս տեսավ Մուկլայի համալսարանի դասախոս, իտալացի Ձովաննի Գուայտայի հետ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի զրույցների ժողովածուն, որը բոլորի համար է եւ ամեն ինչի մասին: Եվ ամեն անգամ, երբ առիթ եմ ունենում բացել այդ գիրքը, մեծագույն ակնածանքով մտովի կրկնում եմ. «Հաճեցե՛ք մեզ դաս տալ, Վեհափառ»:

Հեղինակ՝ ՍԿՐՏՅԱԼ



հնչում էր ռադիոուսկնդիրների համար: Չնայած նախնական պայմանավորվածությանը՝ լրագրողի գալուստն Վեհափառը, կարծես, պատրաստ չէր: Այսուհանդերձ, մի փոքր կենտրոնաշարժում ու մտքերը ժողովուրցը հետո Վեհափառն սկսեց խոսել: Պատգամը հաշվերացի տոնի առիթով էր, որ կրկնում էր այդ օրերի իր քարոզը: Սակայն խոսքը պարզ կրկնություն չէր, այլ լի էր նոր, հետաքրքիր մտքերով ու մեկնաբանություններով: Ու թեւեւ հիվանդության պատճառով Վեհափառին երկար խոսել այնտեղ չէր տարելի, սակայն նա այնպես էր սարվել, որ իզուր էր լրագրող-

նուկների հետ հանդիպումներին: Առաջին անգամ ներկա գտնվելով Վեհափառի հետ երեսուներեք մի հանդիպմանը՝ ինքս մեծ ոգեւորություն ապրեցի՝ հետազգայում հասկանալով արդեն, որ Վեհափառի գործադրած «հնարը» մանկական լսարանն աշխուժացնելու փորձված մեթոդ էր: Երեսուներեքի հետ հանդիպելիս՝ նա առաջինը հարցնում էր, թե արդո՞ւք գիտնե՛ք «Հայր մեր»-ը: Սովորաբար հնչում էին երկչուտ ու նվազ ձայնով մի քանի «այո»-ներ, որից հետո Վեհափառը, ափը տանելով ակնաչի, կրկնում էր հարցը. «Չեմ լսում, ավելի բարձր»: Երեսուներեքի ձայն ա-



«ՀԱՅ ԳԻՐԻՔԻ ՃՐԱԳԱՎՈՅՑ Է ԱՅՍՕՐ...»

Սկիզբը՝ էջ 3

Ամեն նոր սկիզբ, եթե ուզում է ընթացք ունենալ, պետք է ամուր հիմք ու արմատներ ունենալ, դառնալ արժանի շարունակությունը նախնայաց լավագույն ավանդույթների: Իսկ մենք խորությամբ ծանոթ ենք դրանք: Ցավով, խորհրդային գաղափարախոսության մեքենան շատ բան փոխեց մեզանում. քրիստոնեական դարավոր ավանդություններ ունեցող մեր ժողովրդի կարգ եկելիցուց հետո դարձավ վարանտ ու ձեւակա՛ն՝ նախնայաց հիշատակին հարգանքի տուրք մատուցելու նման մի բան:

Այսօր, երբ պատրաստվում ենք կառուցել նոր երկիր ու նոր հասարակարգ, մեզ օդ ու ջրի պես անհրաժեշտ է նաեւ հոգեւոր ստույգ, իսկ դա առանկ հոգեւոր գիտելիքների ու իմացությունների անհնարին է: Այս իմաստով անգնահատելի է Գարեգին Առաջին Հայրապետի «Հայաստանեայց Եկեղեցին իր ծառայական կերպին մեջ» գիրքը, որն ըստ էության ուսումնական մի հրաշալի ձեռնարկ է: «Բնութան օրէնքը չի թողնարի ռեւէ դատարկութիւն... Երբ ռեւէ պատճառով դատարկութիւն է ստեղծվում, այն անմիջապէս լցւում է մի բանով ու մի կերպով...

Երբ պարագուծիւն ստեղծուի այս կամ այն պատճառով, եթէ մենք չիմանանք եւ չհզուենք այն լցնելու մեր անհատական անձի երբ մեզ սեպակական ազգի բարիք բերող տարրերով ու սուսայնեւրով, ուրիշներ կուզան իրենց ուզած ձեւով ու չափով այն լցնելու:

Եւ այդ է պատահում, ինչպէս տեսնում ենք, երբ օտար կրօնական կամ փիլիսոփայական աշխարհայեացքներ տարածող աղանդատրական շարժումներ լայնածիր եւ տեղագին աշխատանքով ջանք են ի գործ դնում իրենց կրօնական մուրա վարդապետութիւններն ու ապագա-

յացնող գաղափարախօսութիւնները տարածելու մեր պաշտելի ժողովրդի մեջ»,- գրքի առաջաբանում իրավացիորեն արում է Հայրապետը:

Այս գիրքը, որ անդրադառնում է Քրիստոսի անձի, քրիստոնեական գաղափարների, Եկեղեցու, մասնավորապես՝ Հայ Առաքելական Եկեղեցու մատուցած բազմաճյուղ ու բազմերակ ծառայությունների կարեւորմանը, չի հավանում ներկայացնելու դրանց համապարփակ, գիտական վերլուծական շարադրանքը, այլ ինչպէս ինքը՝ հեղինակն է նշում, «ճաշին համը նախազգացող այխորձաբեր մատու-

ցում է», որ ընթերցողի «հոգեւոր սեղանին» է ընծայվում «որպես մի բաժակ ջուր, մի պատառ հաց»:

Անձանձրույթ, ավելին՝ խիտ հետաքրքրությամբ ընթերցող գրքի ողջ շարադրանքն աչքի է ընկնում իր պարզ ու գեղեցիկ լեզվով, դիպուկ, հաճախ անսպասելի համատարություններով, անհրաժեշտ ու անհրաժեշտ զգուշացնող զգուշացնող ակնաչի կարեւորող ու իմաստավոր, Ավետարանից, մեր մատենագրության հարուստ գանձարաններից, բանաստեղծներից քաղված մեջբերումներով: 7

Շարունակությունը՝ էջ 7



տար պետություններուն կը ներկայանան որպէս ՄԵԿ ժողովուրդ, ՄԵԿ ազգ, ՄԵԿ կեցունքով միշտ պաշտպանելով Լիբանանի միութիւնը, ամբողջականութիւնը, ազատութեան սկզբունքը, փոխադարձ յարգանքի եւ եղբայրական գոյակցութեան դրութիւնը»:

«Բաժանի՛ր, որ տիրես» մարդկային դաժան մտքին արդէն 16 դար է, ինչ հայ ժողովուրդը, իր Եկեղեցու գլխավորութեամբ, հակադրում է «Մերձեցի՛ր, որ չտիրես» բազմափորձ կեցվածքը: Հայոց Հայրապետն իր փորձառութեամբ գիտեր, որ մերձեցումը դեռեւս ծառայամտութիւն չէ, չգիտակցված կյանք կամ

պատմությունը, մշակույթը, մեր հայեցի շունչն ու ոգին, մեզ պատկան ճանապարհը՝ թող որ հաճախ ընթանա անցանկալի կանգաւորներով, բայց լինի անշեղորէն մերը՝ գրունտացած մեր պատերի ոտնահեռքերով: Եղբուն վերապարձ ժողովուրդը, որ Զրիստոսի հաշին խաչակից եղավ եւ Երա փառավոր Հարուն կանաչութեամբ վերընծալով, իրավունք չունի ուսահատ վերու, իրավունք չունի իր պատմության դասերն անտեսելու: Հինգ տարի ձգվող լիբանանական տագնապալից օրերին հաշտողող տարիները վերաշինության, վերաստեղծումի օրեր համարելով՝ Լա կրկին կոչ է անում իր ժողովուրդին. «Աչքի բիբին պէս պահպանենք այն, ինչ որ հայը հա՛յ կ'ընէ մեր մէջ: Որովհետեւ մենք կը հաստատենք, որ հայութեան մէջ ոչինչ կայ, որ մարդկութեան վնաս բերէ: Հայութիւնը իր պատմական ամբողջ տարրութեամբ է

րը՝ չարքաշ ազգի մը անկամները, քար-Հայաստանէն կենանք - հայկական հանել գիտցող ցեղի մը ժառանգորդները, քրտինքով հացը շահիլ գիտցող հայկազեան տոհմի նոր ընծիւները իրենց անունը բարձր պահել պէտք է գիտնան՝ որպէս պարկեշտութեան պիտաններ եւ իրենց կարծեքներու ծառայութեան ևուրթայներ»:

Հայոց 131-րդ Հայրապետի «Ծանի՛ր գեթզ» գրքի մեծագույն պատգամը, այնուամենայնիվ, մեր քրիստոնեական կեցվածքին, մեր պատերի դարավոր հավատքին, հայ Լատին միաժին Որդուն հավատարիմ մնալն է՝ անկախ այն բանից, թե ժամանակներն ինչ են մատուցում մեզ. «Բայց մէկ բան պէտք է ըստն, եւ դուք ալ ինծի հետ կրկնեցէք. Փ՜ՂԸ ԵՅԶ, Ա՜ՏՏՈՒՄԾ, Յ՜ՂՆԳՍ ԱՄԵՆԱՄՅԻ, ՏԵ՛Ր, Փ՜ՂԸ ԵՅԶ...»:



«ՀԱՅ ԳԻՐԿԻ ԸՐԱԳԱՎՈՅՑ Է ԱՅՍՕՐ...»

Սկզբը՝ էջ 7

«Ան որ ինքզինք կը ճանչայ, գիտէ, թէ ինչ է բարիքը իրեն համար. ան կրնայ իրարմէ գատորոշել այն, ինչ որ իր սեպակն ու յօժերը կրնան տանիլ եւ այն, ինչ կը մերժեն տանիլ... Ան կը իրաւարկ ընելէ այն, ինչ որ չի կրնար ընել եւ այսպիսով կը խնայէ իրեն սխալները եւ կը խուսափի թշուառութենէ»: Ինքնաճանաչ-

ման չէ: Մերձեցումը նախ եւ առաջ առիթ է առողջացումի, հույս է ու հավատ, ստեղծարար սեր: Այն խաղաղության ու երջանկության բանալի է: Հանգամանքներ թերմամբ աշխարհով մեկ սփռված հայը շատ հաճախ է ստիպված լինում սարքել ոչ թե իր, այլ իրեն օրեան տված, իր գոյության ու գոյատեւման համար պայաններ ընձեռած օտարի հո-

իր ստեղծագործական շարունակական վկայութեամբ բարիք մըն է մարդկութեան համար» եւ ուստի նաեւ այն ժողովուրդի, որը ժամանակին ձեռք մեկնեց մարդկայնորէ գազանից քաղաքուրծ հայրերունը՝ թե՛ իր շատին եւ թե՛ սակավից բաժին հանելով:

Տավալի գուզադիպութեամբ այսօր էլ սիրիահայրությունն է ապրում տագնապալից օրեր: Լիբանանական դեպքերի առնչությամբ գրած Վեհափառի հորդորներն ու պատգամները միանգամայն արդիական են այսօր նաեւ սիրիահայրության համար. «...Լիբանանի մէջ հազար ու մի տառապանք տեսար եւ դեռ կը տեսնես: Մի՛ կտորիկ հոգեկան եւ ազգային դիմացկունութիւնը երաշխաւորող քրիստոնեական հաստքդ եւ ազգային-եկեղեցական ասանդուքներդ՝ ցուցաբաշտ եւ սնամէջ արդիականացման մը գոհ դառնալու համար: Եղի՛ր արդիական, հետեւե՛լ՝ այժմու աշխարհի դրական նուաճումներուն: Բայց միշտ պահէ ինքնութիւնը քու ազգային դիմագծութեանդ: Եղի՛ր ու մնացի՛ր ուխտի՛ ժողովուրդ...»: Ուխտ ընէ գիտցող եւ ուխտը կատարել կրող ժողովուրդը չի՛ մեներկ...»:

Եվ այսպէս, իր ողջ գործունեության ընթացքում, ամեն օր բանասխոտությամբ թե՛ բարոզով, հորդորով թե՛ կոչով, հատորների վերածված իր անցուն, անդադրում օր ու գիշերվա հուզերով ու սպարումներով, խիտրով ու մտքերով Գարեգին Ա Յովկապետը, Մեծի Տանն Կիլիկիայ կաթողիկոսության երկարամյա գահակալության շրջանում եւ թե՛ Ամե-

տանորոգ ծաղկած ու ծաղկող, կատուցող ու շէնացող մեր հայրենի հողի վրայ մի նոր ոգի է վերածնունդ: Դա մեր ոգին է, մեր մահով չնահացած, մեր գրքերով ու տաճարներով, մեր խաչքարերով եւ յուշարձաններով, մեր երգերով ու պարերով, մեր ասանդութիւններով ու բարքերով, մեր վանքերով ու վանականներով յաւենա պարող ոգին է, որ հիմա գար-



ման նման գիտական ու փիլիսոփայական բացատրություններից զատ՝ Հայրապետն իր այս շարադրանքներում փորձ է անում նկատելի անկատարությամբ լիբանանահայությանը պահել իմաստուն քայլերի շրջանակում՝ հատկապես մեկնաբանելով սողմոնյան «Ճանաչել գիմաստութիւն եւ գիտատ...»-ի յուրաքանչյուր տառն ու բառը, որի իմաստը հավասարագոր է սուրբատյան «Չընկարկված կյանքն չարժե անգամ արարել» հազարամյակների բովով անցած իմաստութեանը: Այդ իմաստությունն իր մէջ իրավորելով իր հայը դարձել հավերժի ճամփորդ, եւ կրկին՝ այդ իմաստությունն էր լիբանանական տագնապի օրերին համախոհ ու միակամ դարձնում բոլոր հայ կուսակցություններն ու հարավատությունները՝ «Երեք հայ յարանուսությունները՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական համայնքները նոր զիրքը որդեգրած են, միասուրբ կը խորհրդակցին, միասին կը շարժին եւ յայս լիբանանեան իշխանութիւններուն եւ օ-

րում ու օտարի օրենքներով: Մարդկային դաժանության հետ նաեւ բարության սերմնահայտը ճաշակած հայի Հովկապետը, ով նույնպէս հայրենաբնակ չէր, չէր կարող անտարբեր մնալ, չէր կարող հեռուն չնայել ու չհորդորել իր հոտին իսպանական առածի խոսքերով. «Մի՛ ձգեր ցնցուղը ձեռքդ, եթէ նոյնիսկ անձրեկ գայ», որը հավասարագոր է մեծն Լամբրոնացու իմաստութեանը. «Ամէն ազգ թող իր հայրերու ասանդութիւնը ամուր պահէ...»

«ԱՄԼՂՂԻԹԻ՛Ր... հաչուած բառ, որովհետեւ սխալ հասկացած իմաստով մը ան ձողկուած է այսօր ժողովուրդի շատ մը խաւերը կողմէ: Անոր սկզբնաղիպ պատկերը, հարազատ իմաստը, սակայն, նուիրական եւ պատկառալից նկարագիր է տարրոլութուն ունի, որոնք այժմ ստուեր են հագրեր մեր ժողովուրդի գաւակներէն շատերու հայեցողութեան եւ կենքին մէջ», - ասես ցավով նշում է Գարեգին Ա Սարգսյան Հովկապետը, ցավով, քանզի ավանդության ճշմարիտ անունը մեր ինքնաճանաչումն է, մեր «ես»-ի բացահայտումը, մեր



նայն Հայոց Հայրապետի կարգավիճակում, փորձում էր արթուն պահել հայի հայեցողությունը, արժեւորել ազգային գիրն ու գրականությունը, գիտական միտքն ու մշակույթը, մայր հայրենիքի եւ անկախ պետականության հանդեպ մշտադիմում սերն ու նվիրումը.

Երա համար հայրենիքն ու հայրենին վերացական հասկացություններ չէին, այլ «ուկեծուկ» այն «շտեմարանները», որոնցում ապրում ու ծնւթանկում է «ուխտի ժողովուրդի»-ի ոգին: «Ձե՛զ եմ աւտու, ձե՛զ, իմ արիւնի ժառանգորդ, իմ հաւատի հոգեկիր, իմ հայրենի հողի ծնունդ եւ տեր՝ Լուրսերոյն ծիւր Հայաստանի, մի պահ մէկ կողմ թողէք տառապանքների, նեղութիւնների, անծուրդների, քանդումների, մահացումների սխուր յուշքը: Լայնեցե՛ք ձեր շուրջը: Մի նոր շունչ է փչում մեր հայրենի աշխարհի վրայ: Հայ գիւղացու կարշնել ձեռքերով մշակուած, հերոսների եւ նահատակների արիւնով գլուած եւ պաշտպանուած, հայ աշխատաւորների քրտինքով մշ-

ման նման գիտական ու փիլիսոփայական բացատրություններից զատ՝ Հայրապետն իր այս շարադրանքներում փորձ է անում նկատելի անկատարությամբ լիբանանահայությանը պահել իմաստուն քայլերի շրջանակում՝ հատկապես մեկնաբանելով սողմոնյան «Ճանաչել գիմաստութիւն եւ գիտատ...»-ի յուրաքանչյուր տառն ու բառը, որի իմաստը հավասարագոր է սուրբատյան «Չընկարկված կյանքն չարժե անգամ արարել» հազարամյակների բովով անցած իմաստութեանը: Այդ իմաստությունն իր մէջ իրավորելով իր հայը դարձել հավերժի ճամփորդ, եւ կրկին՝ այդ իմաստությունն էր լիբանանական տագնապի օրերին համախոհ ու միակամ դարձնում բոլոր հայ կուսակցություններն ու հարավատությունները՝ «Երեք հայ յարանուսությունները՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական համայնքները նոր զիրքը որդեգրած են, միասուրբ կը խորհրդակցին, միասին կը շարժին եւ յայս լիբանանեան իշխանութիւններուն եւ օ-

րում ու օտարի օրենքներով: Մարդկային դաժանության հետ նաեւ բարության սերմնահայտը ճաշակած հայի Հովկապետը, ով նույնպէս հայրենաբնակ չէր, չէր կարող անտարբեր մնալ, չէր կարող հեռուն չնայել ու չհորդորել իր հոտին իսպանական առածի խոսքերով. «Մի՛ ձգեր ցնցուղը ձեռքդ, եթէ նոյնիսկ անձրեկ գայ», որը հավասարագոր է մեծն Լամբրոնացու իմաստութեանը. «Ամէն ազգ թող իր հայրերու ասանդութիւնը ամուր պահէ...»

«ԱՄԼՂՂԻԹԻ՛Ր... հաչուած բառ, որովհետեւ սխալ հասկացած իմաստով մը ան ձողկուած է այսօր ժողովուրդի շատ մը խաւերը կողմէ: Անոր սկզբնաղիպ պատկերը, հարազատ իմաստը, սակայն, նուիրական եւ պատկառալից նկարագիր է տարրոլութուն ունի, որոնք այժմ ստուեր են հագրեր մեր ժողովուրդի գաւակներէն շատերու հայեցողութեան եւ կենքին մէջ», - ասես ցավով նշում է Գարեգին Ա Սարգսյան Հովկապետը, ցավով, քանզի ավանդության ճշմարիտ անունը մեր ինքնաճանաչումն է, մեր «ես»-ի բացահայտումը, մեր

նայն Հայոց Հայրապետի կարգավիճակում, փորձում էր արթուն պահել հայի հայեցողությունը, արժեւորել ազգային գիրն ու գրականությունը, գիտական միտքն ու մշակույթը, մայր հայրենիքի եւ անկախ պետականության հանդեպ մշտադիմում սերն ու նվիրումը.

Երա համար հայրենիքն ու հայրենին վերացական հասկացություններ չէին, այլ «ուկեծուկ» այն «շտեմարանները», որոնցում ապրում ու ծնւթանկում է «ուխտի ժողովուրդի»-ի ոգին: «Ձե՛զ եմ աւտու, ձե՛զ, իմ արիւնի ժառանգորդ, իմ հաւատի հոգեկիր, իմ հայրենի հողի ծնունդ եւ տեր՝ Լուրսերոյն ծիւր Հայաստանի, մի պահ մէկ կողմ թողէք տառապանքների, նեղութիւնների, անծուրդների, քանդումների, մահացումների սխուր յուշքը: Լայնեցե՛ք ձեր շուրջը: Մի նոր շունչ է փչում մեր հայրենի աշխարհի վրայ: Հայ գիւղացու կարշնել ձեռքերով մշակուած, հերոսների եւ նահատակների արիւնով գլուած եւ պաշտպանուած, հայ աշխատաւորների քրտինքով մշ-

նայն Հայոց Հայրապետի կարգավիճակում, փորձում էր արթուն պահել հայի հայեցողությունը, արժեւորել ազգային գիրն ու գրականությունը, գիտական միտքն ու մշակույթը, մայր հայրենիքի եւ անկախ պետականության հանդեպ մշտադիմում սերն ու նվիրումը.

Երա համար հայրենիքն ու հայրենին վերացական հասկացություններ չէին, այլ «ուկեծուկ» այն «շտեմարանները», որոնցում ապրում ու ծնւթանկում է «ուխտի ժողովուրդի»-ի ոգին: «Ձե՛զ եմ աւտու, ձե՛զ, իմ արիւնի ժառանգորդ, իմ հաւատի հոգեկիր, իմ հայրենի հողի ծնունդ եւ տեր՝ Լուրսերոյն ծիւր Հայաստանի, մի պահ մէկ կողմ թողէք տառապանքների, նեղութիւնների, անծուրդների, քանդումների, մահացումների սխուր յուշքը: Լայնեցե՛ք ձեր շուրջը: Մի նոր շունչ է փչում մեր հայրենի աշխարհի վրայ: Հայ գիւղացու կարշնել ձեռքերով մշակուած, հերոսների եւ նահատակների արիւնով գլուած եւ պաշտպանուած, հայ աշխատաւորների քրտինքով մշ-

նայն Հայոց Հայրապետի կարգավիճակում, փորձում էր արթուն պահել հայի հայեցողությունը, արժեւորել ազգային գիրն ու գրականությունը, գիտական միտքն ու մշակույթը, մայր հայրենիքի եւ անկախ պետականության հանդեպ մշտադիմում սերն ու նվիրումը.

Երա համար հայրենիքն ու հայրենին վերացական հասկացություններ չէին, այլ «ուկեծուկ» այն «շտեմարանները», որոնցում ապրում ու ծնւթանկում է «ուխտի ժողովուրդի»-ի ոգին: «Ձե՛զ եմ աւտու, ձե՛զ, իմ արիւնի ժառանգորդ, իմ հաւատի հոգեկիր, իմ հայրենի հողի ծնունդ եւ տեր՝ Լուրսերոյն ծիւր Հայաստանի, մի պահ մէկ կողմ թողէք տառապանքների, նեղութիւնների, անծուրդների, քանդումների, մահացումների սխուր յուշքը: Լայնեցե՛ք ձեր շուրջը: Մի նոր շունչ է փչում մեր հայրենի աշխարհի վրայ: Հայ գիւղացու կարշնել ձեռքերով մշակուած, հերոսների եւ նահատակների արիւնով գլուած եւ պաշտպանուած, հայ աշխատաւորների քրտինքով մշ-

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՔԱՅԱՍՏԱՆ

կրտական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր
Աստղիկ Ստամբուլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝
gh@etchmiadzin.am
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 23.8.2012 թ.
Տպաքանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ